ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 2. 1964 Общественные науки

Վ. Հ. Բաղդասարյան

ՊԱՐՏԻԱՅԻ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ

Հասարակական հարստության անընդհատ աճի գլխավոր գործոնի, աշխատանքի արտադրողականության բարձրացումը, ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի հետագա բուռն զարգացման գլխավոր պայմանն է։ Սակայն այն առավել ևս անհրաժեշտ է գյուղատնտեսության մեջ, որի համեմատական ետ մնալու հիմնական պատճառը, ինչպես բազմիցս նշվել է մեր պարտիայի Կենտկոմի և կառավարության՝ գյուղատնտեսության զարգացման վերաբերյալ ընդունած որոշումներում, աշխատանքի ցածր արտադրողականությունն է, նրա մեքենայացման համեմատաբար ցածր աստիճանը, սրդի գիտության ու տեխնիկայի ընձեռած հնարավորությունների դեռևս անբավարար օգտագործումը։ Ելնելով դրանից, ՍՄԿՊ Ծրագիրը նախատեսում է գյուղատնտեսության մեջ աշխատանքի արտադրողականության բարձրացման առավել արագ տեմպ։ Ըստ Ծրագրի, տասը տարում այն կավելանա 2,5, իսկ քսան տարում՝ 5—6 անգամ։ «Գյուղատնտեսական աշխատանքի արտադրողականության արագ աճը,— ասված է պարտիայի Ծրագրում,— որն իր տեմպերով ավելի բարձր կլինի, քան արդյունաբերական արտադրության մեջ, թույլ կտա վերացնել գյուղատնտեսության ետ մնալը արդյունաբերությունից և այն կդարձնի կոմունիստական հասարակարգի տնտեսության բարձր զարգացած ճյուղ»[1]։

Գյուղատնտեսական աշխատանքի արտադրողականության բարձրացման համար գիտականորեն հիմնավորված ծրագիր մշակեց ՍՄԿՊ Կենտրոնական կոմիտեի 1963 թ. դեկտեմբերյան պլենումը, որը ամբողջ ուժով նորից ընդգծեց գիտության, մասնավորապես քիմիայի, անգնահատելի դերը գյուղատնտեսական մթերքների արտադրության ավելացման, սննդամթերքների լիառատության ստեղծման, ժողովրդի նյութատեխնիկական պահանջմունքների լրիվ բավարարման բնագավառում։

Գյուղատնտեսական աշխատանքի արտադրողականությունը սոցիալ-տնտեսական կոնկրետ կատեգորիա է, որը պայմանավորված է մի շարք ուրույն գործոններով։ Այդ գործոնները ցույց են տալիս, մի կողմից, թե մարդը ինչի է հասել բնությունը «նվաճելու», նրա անսպառ բարիքները իր կարիքների բավարարմանը ծառայեցնելու դժվարին ու անհատնում գործունեության մեջ, մյուս կողմից, թե ինչպիսին է նրա, որպես անհատի վերաբերմունքը դեպի հասարակությունը, թե որքանով է նա շահագրգռված արտադրության արդյունքի մեջ։ Բացահայտելով աշխատանքի արտադրողականությունը պայմանավորող գործոնները, Կ. Մարքսը գրել է. «Աշխատանքի արտադրողական ուժը որոշվում է բազմաբարդ հանգամանքներով, ի միջի այլոց՝ բանվորի հմտության

---

[1] «ՍՄԿՊ XXII համագումարի նյութերը», Հայպետհրատ, Երևան, 1962, էջ 500։

միջին աստիճանով, գիտության կարգացման մակարդակով ու նրա տեխնոլոգիական կիրառման աստիճանով, արտադրական պրոցեսի հասարակական կոմբինացիայով, արտադրության միջոցների չափերով ու էֆեկտիվությամբ, և, վերջապես, բնական պայմաններով»[2].

Հիմք ընդունելով մարքսյան այդ բնորոշումը, կարելի է ասել, որ հասարակական աշխատանքի արտադրողականությունը որոշվում է կոնկրետ մարդկային հասարակության զարգացման տվյալ շրջանին յուրահատուկ հանգամանքներով, այսինքն՝ ա) աշխատավորի կուլտուր-տեխնիկական մակարդակով, բ) գիտության զարգացման և այն անմիջական արտադրաուժ դարձնելու աստիճանով, գ) արտադրության կազմակերպմամբ, դ) տեխնիկայի զարգացման մակարդակով և այն օգտագործելու էֆեկտիվությամբ, ե) բնական պայմաններով։

Գյուղի աշխատավորության կուլտուր-տեխնիկական մակարդակի բարձրացումը

Հոկտեմբերյան սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի և սովետական իշխանության հաստատման շնորհիվ գյուղատնտեսության կոլեկտիվացման լենինյան պլանի կենսագործումը գյուղում արտադրողական ուժերի զարգացման չտեսնված հնարավորություններ ստեղծեց։ «Սովետական գյուղի անցումը խոշոր սոցիալիստական տնտեսության մեծ ռևոլյուցիա էր տնտեսական հարաբերությունների մեջ, գյուղացիության կյանքի ամբողջ կացութաձևի մեջ»[3], ասված է ՍՄԿՊ Ծրագրում։ Կոլտնտեսային կարգը աշխատավոր գյուղացիական մասսաներին դուրս բերեց խավարից ու ստրկացումից, նրանց հաղորդակից դարձրեց կուլտուրային, գիտությանը, տեխնիկային։ Բավական է նշել, որ 1959 թ. երկրի գյուղատնտեսության մեջ աշխատող մեխանիզատորների թիվը 2,5 միլիոն մարդուց ավելի էր, կամ 598 անգամ շատ, քան 1926 թ.։ Կոլտնտեսային կարգի և արտադրության մեջ տեխնիկայի լայն կիրառման շնորհիվ զգալիորեն բարձրացել է նաև մեր հանրապետության գյուղատնտեսության աշխատողների կուլտուր-տեխնիկական մակարդակը։ Հազարավոր կոլտնտեսականներ, սովխոզների բանվորներ հաջող կերպով տիրապետում են ժամանակակից բարդ տեխնիկային և այն հմտորեն օգտագործում արտադրության մեջ։ Գյուղական երիտասարդության զգալի մասը ավարտելով միջնակարգ դպրոցը, լրացնում է գյուղատնտեսության մեխանիզատորների շարքերը։ Շատերը ստանալով բարձրագույն տեխնիկական կրթություն աշխատում են գյուղատնտեսության մեջ։ Միայն Էջմիածնի արտադրական վարչությունում այժմ կոլտնտեսային ու սովխոզային արտադրության մեջ աշխատում են 38 ինժեներ-մեխանիզատորներ։

Աշխատանքի արտադրողականության հետագա բարձրացումը գյուղատնտեսության աշխատողներից պահանջում է ավելի բարձր կուլտուր-տեխնիկական մակարդակ։ Ամենակատարելագործված տեխնիկան, ամենաառաջավոր գիտությունը կլինեին պակաս օգտակար, եթե մարդիկ, որոնք կիրառում են գիտությունը և տեխնիկան արտադրության մեջ, չունենային անհրաժեշտ գիտատեխնիկական գիտելիքներ, արտադրամիջոցները և գործիքներն օգտագոր-

2 Կ. Մարքս, Կապիտալ, Հայպետհրատ, 1945, հատոր 1, էջ 46։

3 «ՍՄԿՊ XXII համագումարի նյութերը», էջ 433։

ծելու հմտություն։ «Գյուղատնտեսության տեխնիկական վերազինումը,— նշվում է ՍՄԿՊ Ծրագրում,— պետք է զուգորդվի աշխատանքի և արտադրության կազմակերպման առավել առաջադիմական ձևերի ու մեթոդների հետ, գյուղատնտեսության արտադրության, աշխատավորների կուլտուր-տեխնիկական մակարդակի ըստ ամենայնի բարձրացման հետ»[4]։

Ներկա էտապում, քիմիացման ու հետագա մեքենայացման հիման վրա գյուղատնտեսության ինտենսիվացման, արտադրության գիտականորեն ու տնտեսապես հիմնավորած կազմակերպելու անհրաժեշտության պայմաններում, գյուղի աշխատավորության կուլտուր-տեխնիկական մակարդակի բարձրացումն առավել առաջնակարգ նշանակություն է ստանում։ Ուստի գյուղական պարտիական կազմակերպությունները, տնտեսությունների ղեկավարները, մասնագետները կոչված են լուրջ ուշադրություն դարձնելու աշխատավորների գիտատեխնիկական գիտելիքների անդադրում հարստացմանը։

Գիտության և տեխնիկայի նվաճումները արտադրության մեջ

Գյուղատնտեսության զարգացման բնագավառում խոշոր դեր ունի գիտությունը։ Հատկապես կարևոր է նրա սերտ կապը պրակտիկայի հետ, գիտության նվաճումների կենսագործումը արտադրության մեջ։ Առանձնապես մեծ է կենսաբանական և քիմիական գիտությունների դերը։ ՍՄԿՊ Կենտկոմը և ՍՍՌՄ Մինիստրների սովետը «Կենսաբանական գիտության հետագա զարգացման և պրակտիկայի հետ նրա կապի ամրապնդման մասին» 1963 թ. հունվարին ընդունած որոշմամբ կենսաբան-գիտնականների առաջ խնդիր դրեցին՝ սերտորեն զբաղվել գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության և անասունների մթերատվության բարձրացման անմիջական խնդիրներով, բացահայտել բույսերի և կենդանիների ամի կենսաբանական օրինաչափությունները, մշակել կենսական պրոցեսների վրա ներազդելու էֆեկտիվ միջոցներ, ստեղծել գյուղատնտեսական կուլտուրաների բարձր արդյունավետ սորտեր, մթերատու անասունների բարձրարժեք ցեղեր, ամեն կերպ նպաստել գիտությունը մարդկանց պրակտիկ պահանջմունքներին ծառայեցնելուն։

Սովետական գիտնականները ստացել են հացահատիկի, եգիպտացորենի, արևածաղկի, ոլոռի, կարտոֆիլի, բանջարեղենի և այլ կուլտուրաների բազմաթիվ նոր մեծարժեք սորտեր, խոշոր եղջյուրավոր անասունների, խոզերի, թռչունների լավագույն ցեղեր։ Նշված բնագավառում մեծ նվաճում է հացահատիկի «Բեզոստայա-1» բարձրաբերք սորտի ստացումը, որը հիանալի բերք է տալիս նաև մեր հանրապետության պայմաններում։ Հաջողությամբ են պսակվել մեր գիտնականների փորձերը՝ ժառանգականության նպատակասլաց փոփոխման միջոցով կաթի յուղայնության բարձրացման բնագավառում։ Այդ եղանակով «Գորկի Լենինսկիին» փորձնական տնտեսությունում ստացված ջերսեյան ցեղի խառնածին կովերը ունեն կաթի բարձր յուղայնություն։ Այժմ հանրապետության տոհմային անասնաբուծական տնտեսություններում նմանօրինակ աշխատանքներ են կատարվում ջերսեյան և տեղական ցեղերի խաչաձևման միջոցով կովերի կաթի յուղայնության բարձրացման նպատակով։

Ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի և հատկապես գյուղատնտ-

---

4 «ՍՄԿՊ XXII համագումարի նյութերը», էջ 500։

սության հետագա ինտենսիվ զարգացման գործում վճռական նշանակություն ունի քիմիան։ «Քիմիայի ամեն մի պրոգրես,— գրել է Կ. Մարքսը,— ոչ միայն ավելացնում է օգտակար նյութերի և արդեն հայտնի օգտակար նյութերի կիրառումների թիվը... Քիմիայի առաջադիմությունը նմանապես սովորեցնում է արտադրության ու սպառման պրոցեսի արտադրությունը նորից մտցնել վերարտադրության պրոցեսի շրջապտույտի մեջ...»։ Եթե արտադրական տարբեր պրոցեսներում կատալիզատորի դեր են կատարում առանձին քիմիական նյութեր, ապա ամբողջ քիմիան, առանց տատանման, կարելի է անվանել ժողովրդական տնտեսության հզոր զարգացման կատալիզատոր։ Դրանով է բացատրվում այն անզուլ ուշադրությունը, որը պարտիան դարձնում է քիմիական արդյունաբերության զարգացման և գյուղատնտեսության քիմիացման հարցերին։ ՍՄԿՊ Կենտկոմի 1958 թ. մայիսյան պլենումում ընդունվել է մեծ քիմիայի ստեղծման ծրագիրը։ Ընթացիկ յոթնամյակում բավականին մեծ գումարով կապիտալ ներդրումներ են կատարվել երկրի քիմիական արդյունաբերության մեջ։ Յոթնամյակի առաջին չորս տարում արդեն շարք են մտել ավելի քան 200 քիմիական ձեռնարկություններ ու արտադրամասեր։ Նույն ժամանակաշրջանում քիմիական արտադրանքի թողարկումը ավելացել է 1,6 անգամ։ Քիմիական արդյունաբերության հզոր զարգացումը հնարավորություն տվեց կարճ ժամանակամիջոցում դգալիորեն ավելացնել հանքային պարարտանյութերի արտադրությունը։ Եթե 1953 թ. արտադրվել է ընդամենը 7 միլիոն տոննա հանքային պարարտանյութ, ապա 1963 թ. այն հասավ մինչև 20 միլիոն տոննայի։

Սովետական ժողովրդի կյանքում խոշոր իրադարձություն էր ՍՄԿՊ Կենտկոմի դեկտեմբերյան (1963 թ.) պլենումը, որն ընդունեց «Քիմիական արդյունաբերության արագ զարգացումը գյուղատնտեսական արտադրության վերելքի և ժողովրդի բարեկեցության բարձրացման կարևորագույն պայմանն է» պատմական որոշումը։ Կենտկոմի պլենումը պարտիայի և ժողովրդի ուշադրությունը բևեռեց քիմիական արդյունաբերության զարգացման տեմպերի արագացման վրա։ «Ներկայումս,— ասված է ՍՄԿՊ Կենտկոմի պլենումի որոշման մեջ,— երկրի էկոնոմիկայի զարգացման գործում բացառիկ կարևոր դեր է պատկանում քիմիական արդյունաբերությանը, որպես գյուղատնտեսության, արտադրության մյուս ճյուղերի հետագա վերելքի և ժողովրդի բարեկեցության բարձրացման կարևորագույն լծակի։ Քիմիայի, ֆիզիկայի, կենսաբանության, մաթեմատիկայի բնագավառում կատարված նորագույն հայտնագործությունները հսկայական չափով արագացնում են հասարակության արտադրողական ուժերի զարգացումը։ Կոմունիզմի նյութատեխնիկական բազայի հաջող ստեղծումը մեծապես կախված է այն բանից, թե ժողովրդական տնտեսության մեջ որքան լայնորեն ու լրիվ կօգտագործվեն գիտության ու տեխնիկայի նորագույն նվաճումները»[6]։ Պլենումը հանձնարարեց ՍՍՌՄ Պետպլանին, միութենական հանրապետությունների մինիստրների սովետներին նախատեսել ժողովրդատնտեսական պլաններում քիմիական արդյունաբերության արտադրանքի ավելացում և հասցնել 1970 թ. հետևյալ չափերի. հանքային պարարտանյութերինը՝ 70—80 միլիոն տոննայի, հերբիցիդներինն ու բույսերի պաշտպանության մյուս

5 Կ. Մարքս, Կապիտալ, Հայպետհրատ, 1945, հատոր 1, էջ 634։
6 «Սովետական Հայաստան», № 292, 17 դեկտեմբերի 1963 թ.։

միջոցներինը՝ մոտավորապես 800—900 տոննայի, քիմիական թելերինը՝ 1 միլիոն 350 հազար տոննայի, պլաստմասսաներինն ու սինթետիկ ձյութերինը՝ 3,5—4 միլիոն տոննայի, ավտոդողերինը՝ 44 միլիոն հատի, լաք ու ներկինը՝ 2,4—2,8 միլիոն տոննայի և այլն։ Հատուկ ուշադրություն դարձնելով քիմիական արդյունաբերության զարգացմանը, պլենումը միաժամանակ նշեց, որ «քիմիայի հսկայական հնարավորություններն առաջին հերթին պետք է օգտագործվեն գյուղատնտեսական արտադրության հետագա վերելքի և երկրում պարենի առատություն ստեղծելու համար»[1]։ Առաջիկա յոթնամյակում քիմիական արտադրության արտադրանքի ծավալը կավելանա 3—3,3 անգամ։ Նախատեսվում է նույն ժամանակամիջոցում կառուցել մոտավորապես 200 նոր և վերակառուցել ավելի քան 500 գործող ձեռնարկություններ։

Գյուղատնտեսության բուռն զարգացման գործում քիմիայի դերը նախ և առաջ կայանում է նրանում, որ այն հնարավորություն է տալիս ցանկալի որակական փոփոխություններ մտցնել գյուղատնտեսության հիմնական արտադրամիջոցում՝ հողում։ Իհարկե, խոսքը ամենից շատ վերաբերում է քիմիական պարարտանյութերին, որոնք վճռական նշանակություն ունեն գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության բարձրացման գործում։

Ընդգծելով հանքային պարարտանյութերի արագ ավելացման անհրաժեշտությունը, պլենումը դրա հետ մեկտեղ նշեց, որ բերքատվության բարձրացումը պայմանավորվում է ո՛չ միայն արտադրվող հանքային պարարտանյութերի քանակով և որակով, այլև դրանց հմուտ, գիտականորեն հիմնավորած գործածությամբ։ Պլենումը սուր քննադատության ենթարկեց այն պարտիական և տնտեսական ղեկավար օրգաններին, կոլտնտեսությունների և սովխոզների ղեկավարներին, որոնք անհրաժեշտ ուշադրություն չեն դարձնում հանքային պարարտանյութերի ճիշտ օգտագործմանը, տեղափոխմանն ու պահպանմանը, չեն ապահովում բարձր բերքի ստացումը նույնիսկ բավարար քանակությամբ պարարտանյութ օգտագործելու դեպքում։

Նշենք, որ այդ քննադատությունը լրիվ կերպով վերաբերվում է նաև մեր Հանրապետության մի շարք կոլտնտեսություններին և սովխոզներին, որտեղ կամ հրաժարվում են տրվելիք հանքային պարարտանյութերը ստանալուց, կամ ստանալու դեպքում ճիշտ չեն օգտագործում։ Օրինակ՝ Ղուկասյանի արտադրական վարչության շատ տնտեսություններ լուրջ կերպով ետ են մնում, կոլտնտեսություններն ու սովխոզները ստանում են հացահատիկային կուլտուրաների միանգամայն ցածր բերք, որը բացասաբար է ազդում արտադրության մյուս ճյուղերի և հատկապես անասնապահության զարգացման վրա։ Վարչության տնտեսությունները 1963 թ. պետք է ստանային 690 տոննա հանքային պարարտանյութ, իսկ ստացել են միայն 157 տոննա։ Նախատեսված է եղել օգտագործել 34 հազար տոննա գոմաղբ, բայց դաշտ է տեղափոխել ընդամենը 11,6 հազար տոննա։ Ամասիայի սովխոզում տարեկան կուտակվում է մոտ 2000 տոննա գոմաղբ, իսկ օգտագործվում է դրա միայն քառորդ մասը։ Նման վիճակ գոյություն ունի նաև մի շարք այլ արտադրական վարչություններում։

Հանքային պարարտանյութերի արտադրության ավելացման, նրանց ինտենսիվ և ռացիոնալ օգտագործման մասին Կենտկոմի պլենումի որոշումը

[1] Նույն տեղում։

առանձնահատուկ նշանակություն ունի մեր հանրապետության գյուղատնտեսության բուռն զարգացման համար։ Մեզ մոտ, հարավային ջերմառատ կլիմայի և համեմատաբար երկար ամառվա պայմաններում, հատկապես ջրովի հողատարածություններում, անհրաժեշտ քանակությամբ հանքային պարարտանյութերի ճիշտ օգտագործումը տալիս է հիանալի արդյունքներ։

Հանքային պարարտանյութերի ռացիոնալ օգտագործման մակարդակի բարձրացման մեջ շատ կարևոր է ճիշտ կազմակերպած ագրոքիմիական ծառայությունը, հողի և բույսերի քիմիական անալիզների կազմակերպումը, ագրոքիմիական քարտեզների կազմումը։ Ագրոքիմիայի և հողագործության ինստիտուտը արդեն 300 կոլտնտեսությունների և սովխոզների համար կազմել է ագրոքիմիական քարտեզներ։ Բացի դրանից ինստիտուտը ավելի քան 500 տնտեսությունների հանձնել է խոշոր մասշտաբի հողային քարտեզներ։ Նշված քարտեզները մեծ նշանակություն ունեն գյուղատնտեսության քիմիացման, հանքային պարարտանյութերի ռացիոնալ օգտագործման, գյուղատնտեսական կուլտուրաների ճիշտ տեղադրման, առավել էֆեկտիվ ցանքաշրջանառությունների կիրառման մեջ։

Գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության բարձրացման գործում մեծ նշանակություն ունի բույսերի պաշտպանության ճիշտ կազմակերպումը, մոլախոտերի և վնասատուների ժամանակին ոչնչացումը, որում էֆեկտիվության տեսակետից առաջնակարգ տեղ են գրավում քիմիական նյութերը։ Ակադեմիկոս Գ. Աղաջանյանի տվյալներով Հայաստանի լեռնային և նախալեռնային շրջաններում, ցանքերը միամյա և բազմամյա մոլախոտերով վարակված լինելու պատճառով, հացահատիկային կուլտուրաների բերքատվությունը տարբեր տարիներում իջնում է 20—55 տոկոսով։ Քիմիական նյութերով մոլախոտերի և վնասատուների ոչնչացումը հողագործության կուլտուրայի բարձրացման կարևորագույն պայմաններից է։ Քիմիական նյութերով մոլախոտերի և վնասատուների դեմ տարվող պայքարն արդյունավետ է և մատչելի բոլոր տնտեսությունների համար, ավելի քիչ ծախսեր է պահանջում, քան նույնիսկ հողի մեքենայական մշակման դեպքում։

Հայաստանի քիմիական արդյունաբերությունը այժմ արտադրում է ավելի քան 126 տեսակի արտադրանք, այդ թվում գյուղատնտեսության համար անհրաժեշտ բազմապիսի նյութեր, պարարտանյութեր, հերբիցիդներ և այլն։ Այդ քիմիական նյութերի արտադրության հետագա ընդլայնումը և գյուղատնտեսության մեջ նրանց լայն կիրառումը զգալիորեն կնպաստի գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության բարձրացմանը։

Այսպիսով, գիտության և հատկապես քիմիայի զարգացումը, նրա նվաճումների հաջող կիրառումը գյուղատնտեսության մեջ վճռաբար կբարձրացնեն աշխատանքի արտադրողականությունը. դրանք գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության և անասունների մթերատվության բարձրացման, կայուն բերք ստանալու և սննդամթերքների արտադրության բավականաչափ ավելացման հուսալի պայմանն են։

Արտադրողականության բարձրացման գործում բացառապես մեծ է տեխնիկայի, գյուղատնտեսական մեքենաների, ագրեգատների, էլեկտրականության դերը։ Հանրահայտ է, որ նախահեղափոխական Ռուսաստանում, ինչպես նաև Հայաստանում գյուղատնտեսության մեջ կիրառվում էր քիչ արտադրողական ձեռքի

աշխատանքը։ Ծանր ինդուստրիայի առավելագույն զարգացմամբ հաջողվեց կարճ ժամանակամիջոցում ստեղծել հայրենական մեքենաշինություն, գյուղատնտեսությունը բավարարել առաջնակարգ տեխնիկայով։ Բավական է նշել, որ 1962 թ. երկրի կոլտնտեսային ու սովխոզային դաշտերում աշխատել են 2 միլիոն 293 հազար տրակտորներ (15 ուժանոցի վերածած), 553 հազար հացահատիկային կոմբայններ, 840 հազար բեռնատար ավտոմեքենաներ։ Դրա շնորհիվ աշխատանքի արտադրողականությունը նախահեղափոխյան Ռուսաստանի գյուղատնտեսության համեմատությամբ 1962 թ. ավելացել է գրեթե 5 անգամ։ Գյուղատնտեսական աշխատանքի արտադրողականության բարձրացումն առանձնահատուկ նշանակություն է ստանում կոմունիզմի ծավալուն կառուցման ժամանակաշրջանում։ Դեկտեմբերյան պլենումը գյուղատնտեսության քիմիացման հետ միասին ընդգծեց նաև մեքենայացման դերը գյուղատնտեսական աշխատանքի արտադրողականության բարձրացման, սննդամթերքների արտադրության ավելացման գործում։

Անկասկած, աշխատանքի արտադրողականության բարձրացման մեջ գիտության հետ միասին հեղափոխական դեր ունի մեքենան։ Սակայն ամենակատարելագործված մեքենան անգամ ինքնին, առանց ճիշտ շահագործման, էֆեկտիվ գործադրման, առանց այն կատարելապես տիրապետող մարդու, մասնագետի, հազիվ թե որևէ օգուտ բերի։ Այդ կապակցությամբ նշենք, որ մեքենայացման միջոցով աշխատանքի արտադրողականության բարձրացման հարցերի պարզաբանումը պետք է անպայմանորեն կապել արտադրվող մթերքների ինքնարժեքի իջեցման հետ, ցույց տալ, որ ինքնարժեքի իջեցումը աշխատանքի արտադրողականության բարձրացման ամենակարևոր և ամենավճռական պայմանն է։ «Ապրանքի արժեքը,— գրել է Կ. Մարքսը,— որոշվում է այն ամբողջ—անցյալ ու կենդանի—բանվորական ժամանակով, որ մտնում է նրա մեջ։ Աշխատանքի արտադրողականության բարձրացումը հենց այն է, որ կենդանի աշխատանքի բաժինը նվազում է, իսկ անցյալ աշխատանքինն՝ աճում, բայց աճում է մի այնպիսի հարաբերությամբ, որ ապրանքի մեջ պարունակվող աշխատանքի ամբողջ գումարը նվազում է, որ ուրեմն կենդանի աշխատանքն ավելի շատ է նվազում, քան անցյալ աշխատանքն ավելանում է»[8]։

Այսպիսով, աշխատանքի արտադրողականության աստիճանի որոշման դեպքում չպետք է սահմանափակվել ժամանակային ցուցանիշներով, այլ անհրաժեշտ է նախ և առաջ ելնել արտադրանքում առարկայացված անցյալ և ներկա աշխատանքի հարաբերությունից ու քանակից։ Պետք է ի նկատի ունենալ, որ տեխնիկայի ամեն մի գործադրում չէ, որ բարձրացնում է աշխատանքի արտադրողականությունը, այլ միայն նրա խելամիտ օգտագործումը, որը հնարավորություն է տալիս մեքենայի արժեքը փոխանցել ավելի շատ արտադրանքի մեջ, տվյալ մեքենայի ավելի երկար ու ինտենսիվ գործադրման միջոցով, որովհետև, ինչպես նշել է Կ. Մարքսը, «մեծ տարբերություն կա մեքենայի արժեքի և արժեքի այն մասի միջև, որ մեքենայից պարբերաբար փոխանցվում է արդյունքին։ Մեծ տարբերություն կա մեքենայի՝ որպես արժեքի գոյացման տարրի և մեքենայի՝ որպես արդյունքի գոյացման տարրի միջև։ Որքան ավելի մեծ է այն ժամանակամիջոցը, որի ընթացքում միևնույն մեքենաները

8 Կ. Մարքս, Կապիտալ, Հայպետհրատ, 1947, հատոր 3, մաս 1, էջ 244։

նորից ու նորից ծառայում են աշխատանքի միևնույն պրոցեսի մեջ, այնքան ավելի մեծ է այդ տարբերությունը»[9]։

Այդ տարբերությունը, սակայն, մեր հանրապետության որոշ տնտեսություններում կամ չնչին է, կամ բոլորովին գոյություն չունի։ Բանն այն է, որ լեռնային և նախալեռնային շրջանների շատ տնտեսություններում ոչ ճիշտ շահագործման հետևանքով տեխնիկան ոչ միայն չի նպաստում աշխատանքի արտադրողականությանը, այլև զգալիորեն բարձրացնում է արտադրվող մթերքների ինքնարժեքը։ Օրինակ՝ Իջևանի արտադրական վարչության Խաշթառակ, Էջմիածնի արտադրական վարչության Շորբուլաղ և այլ գյուղերի կոլտնտեսություններում ԴՏ—54 մարկայի տրակտորներն ամիսներ շարունակ օգտագործում են կթվորուհիներին գյուղից ֆերմա և այնտեղից գյուղ տեղափոխելու համար, իսկ դաշտային աշխատանքներում օգտագործվում են ընդամենը մի քանի օր։ Տեխնիկայի նման օգտագործումը ոչ միայն չի իջեցնում մթերքների ինքնարժեքը, այլ ընդհակառակը՝ նպաստում է նրա բարձրացմանը, որովհետև «ապրանքի արժեքը,— ինչպես գրել է Կ. Մարքսը,— որոշվում է ոչ միայն այն աշխատանքի քանակով, որն ապրանքին վերջնական ձև է տալիս, այլ նաև աշխատանքի այն քանակով, որը պարունակվում է այդ ապրանքի արտադրության միջոցների մեջ»[10]։

Աշխատանքի արտադրողականության բարձրացման գործում, այսպիսով, տեխնիկան կարող է վճռական դեր խաղալ միայն նրա ճիշտ, տնտեսապես էֆեկտիվ օգտագործման դեպքում։

Աշխատանքի կազմակերպումը և արտադրողականության բարձրացումը

Աշխատանքի արտադրողականության բարձրացումը պայմանավորող հաջորդ կարևորագույն պայմանը արտադրության ճիշտ կազմակերպումն է։ Կոմունիզմի ծավալուն կառուցման ժամանակաշրջանում, առաջնակարգ տեխնիկայի, առաջավոր գիտության և գյուղատնտեսության աշխատողների կուլտուր-տեխնիկական բարձր մակարդակի առկայության պայմաններում արտադրության ճիշտ կազմակերպումը առանձնահատուկ նշանակություն է ստանում։ Եթե միևնույն արտադրապայմաններն ունեցող երկու հարևան տնտեսություններից մեկը առաջավոր է, տնտեսապես ամուր, իսկ մյուսը տարեցտարի հետադիմում է, ապա դա բացատրվում է ամենից առաջ այդ տնտեսություններում արտադրության կազմակերպման տարբեր մակարդակներով։ Օրինակ, Մեղրու արտադրական վարչության Մեղրի և Լեհվազ գյուղերի կոլտնտեսությունները հարևան լինելուց բացի ունեն նաև նույն արտադրապայմանները։ Սակայն 1963 թ. անբարենպաստ կլիմայական պայմաններում Մեղրու կոլտնտեսությունը հեկտարից ստացել է 200 ցենտներ խաղողի բերք, իսկ Լեհվազի կոլտնտեսությունը՝ համարյա ոչինչ։

Ժամանակակից պայմաններում գյուղատնտեսական արտադրությունը մեծ պահանջներ է ներկայացնում։ Այն պահանջում է ոչ միայն ագրոտեխնիկական և զոոտեխնիկական կանոնների ճիշտ կիրառում, այլև, առաջին հերթին, անմիջական արտադրողների՝ կոլտնտեսականների, սովխոզների բանվորների նյութական շահագրգռվածության բարձրացում։

---

9 Նույն տեղում, 1954, հատոր 1, էջ 406—407։

10 Նույն տեղում, էջ 332։

Նյութական շահագրգռվածության լենինյան սկզբունքը՝ լավ աշխատանքի դիմաց՝ լավ վարձատրություն դրությից բացի բովանդակում է այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսիք են՝ բարոյական և նյութական գործոնների ճիշտ զուգորդումը, արտադրության կազմակերպումից բխող և նրա մակարդակին համապատասխանող օբյեկտիվ օրինաչափությունների անվերապահ կատարումը, նյութական շահագրգռվածության պայմանների և միջոցների ստեղծումը և այլն։ Նշված հանգամանքները գյուղատնտեսության մեջ աշխատանքի արտադրողականության բարձրացման անհրաժեշտ պայմաններ են։ Գյուղատնտեսության քիմիացման, ինտենսիվացման կապակցությամբ գյուղատնտեսական արտադրության կազմակերպումը կոլտնտեսությունների ու սովխոզների ղեկավարներից պահանջում է ինչպես մասնագիտական խորը գիտելիքներ, այնպես էլ կազմակերպական մեծ ընդունակություններ։ Մեծ ու պատասխանատու խնդիրներ են դրվում գյուղական պարտիական կազմակերպությունների առջև, որոնք, ինչպես նշվում է ՍՄԿՊ Կենտկոմի դեկտեմբերյան պլենումի որոշման մեջ, «կոչված են գյուղատնտեսական արտադրության ղեկավարումն իրագործել է՛լ ավելի մեծ գործիմացությամբ, է՛լ ավելի մեծ հմտությամբ, իրենց ջանքերն ուղղելով այն նոր հնարավորությունների ավելի լավ օգտագործման նպատակին, որ բացում է քիմիան գյուղատնտեսության առջև»[11]։

Աշխատանքի արտադրողականության վրա ազդող մյուս կարևոր հանգամանքը բնական պայմաններն են։ Դժբախտաբար, հարկ է նշել, որ մեր տնտեսագիտական գրականության մեջ և պարբերական մամուլում, երբ խոսվում է աշխատանքի արտադրողականության մասին, բնական պայմանների դերը կամ թերի է պարզաբանվում, կամ ամբողջովին անտեսվում է։ Գյուղատնտեսական աշխատանքի արտադրողականության բարձրացման ուղիների որոշման մեջ բնական պայմանների անտեսումը գիտականորեն սխալ է, գործնականորեն՝ արատավոր։ Չէ որ այժմ, պարտիայի հիմնական ուշադրությունը ուղղված է այն բանին, որ գյուղատնտեսության քիմիացման միջոցով վերափոխվեն գոյություն ունեցող բնական պայմանները, մասնավորապես անհրաժեշտ քանակությամբ հանքային պարարտանյութերի օգտագործմամբ բարձրացվի հողի բերրիությունը։

Ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերի հետ համեմատած գյուղատնտեսության մեջ աշխատանքի արտադրողականության բարձրացման վրա բնական պայմաններն ավելի մեծ ներգործություն ունեն, սակայն այդ չի նշանակում, որ վերջիններս անփոփոխելի են։ Մարդն ի վիճակի է ակտիվ ներգործելու բնական պայմանների վրա, այն վերափոխելու իմաստով։ Տվյալ դեպքում մեզ հետաքրքրում է ոչ թե բնական պայմանների ամբողջությունը, որը ի դեպ առանձին ու մեծ հետազոտության առարկա է, այլ նրա տարրերից մեկը՝ ոռոգման մեքենահարմարության աստիճանը, որը մեր հանրապետության պայմաններում ունի առանձնահատուկ նշանակություն։ Հայաստանը ունի ընդամենը 3 միլիոն հեկտար հողատարածություն, որի միայն մեկ վեցերորդ մասն է մշակվում, իսկ դրա միայն քառորդ մասն է պիտանի մեքենայացման համար։ Բացի դրանից մշակվող հողերի զգալի մասը (60%-ը) ծովի մակերևույթից 1500—2000 մետրով բարձր է։

Պարտիայի կողմից գյուղատնտեսության աշխատողների առջև դրված խնդ-

---

11 «Սովետական Հայաստան», № 292, 17 դեկտեմբերի 1963 թ.։

դիրների հաջող կատարման, գյուղատնտեսական աշխատանքի արտադրողականության աննախընթաց բարձրացման համար համապատասխան միջոցառումներ մշակելիս անհրաժեշտ է հաշվի առնել տեղական հողա-կլիմայական, բնական պայմանները։ Մեր կարծիքով, գյուղատնտեսության հետագա ինտենսիվացումը տվյալ պայմաններում կարելի է լուծել երկու եղանակով. նախ՝ թեք տարածություններում գործադրել հատուկ մեքենաներ ու մեխանիզմներ, որոնց արտադրությունը անհապաղ անհրաժեշտություն է, երկրորդ՝ պետք է վերջ տալ կենդանի քաշող ուժի անհիմն վերացման արատավոր պրակտիկային այն տնտեսություններում, որոնք ունեն բավական շատ ոչ տրակտորահարմար հողատարածություններ։

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Իջևանի, Գորիսի, Աշտարակի, Մեղրու, Սիսիանի և այլ արտադրական վարչությունների բազմաթիվ տընտեսություններում վերացրել են բանող անասունները, հատկապես կենդանի քաշող ուժը՝ եզները, որի հետևանքով տասնյակ հազարավոր հեկտար՝ նախկինում մշակված բերրի հողատարածություններ այժմ թողնված են անմշակ։

ՍՄԿՊ Կենտկոմի դեկտեմբերյան պլենումը պարտիական և տնտեսական օրգանների առջև խնդիր դրեց ամեն կերպ օգտագործել ներտնտեսային ռեզերվները գյուղատնտեսական մթերքների արտադրության ավելացման համար։

ՍՄԿՊ Կենտկոմի դեկտեմբերյան (1963 թ.) պլենումը ընդգծելով աշխատանքի արտադրողականության հետագա արագ բարձրացման վճռական նշանակությունը գյուղատնտեսական մթերքների արտադրության ավելացման գործում, գյուղական պարտիական կազմակերպությունների, գյուղի աշխատավորության առջև նոր խնդիրներ դրեց՝ տեղական բոլոր ռեզերվները ռացիոնալ օգտագործելու, աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու միջոցով ապահովել գյուղատնտեսական արտադրության շեշտակի վերելքը։

В. О. Багдагюлян

ПРОГРАММА КПСС И ПОВЫШЕНИЕ ПРОИЗВОДИТЕЛЬНОСТИ СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННОГО ТРУДА

(Резюме)

Вопросы повышения производительности сельскохозяйственного труда всегда находились и находятся, особенно после исторического сентябрьского (1953 г.) Пленума ЦК КПСС, в центре внимания нашей партии. В настоящее время, когда партией выдвинута задача интенсификации сельскохозяйственного производства на основе химизации и дальнейшей механизации, вопросы ускоренного повышения производительности труда приобретает особую актуальность.

В данной статье рассказывается о задачах повышения производительности сельскохозяйственного труда, изложенных в Программе КПСС, о путях и способах их успешного выполнения в условиях Армянской ССР, о решениях декабрьского (1963 г.) Пленума ЦК КПСС по химизации сельского хозяйства, освещается роль науки и техники, культурно-технического уровня тружеников села, правильной организации производства в повышении производительности труда и о задачах сельских партийных организаций по использованию местных ресурсов.